ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0010, ք. Երևան, Կորյունի 15/1, Հեռ: (00 37410) 511-773

№ ԴԴ-3-Ե-4955

«16» հունիսի 2022թ.

ՅՈՒՆԻՔՈՄՓ ՓԲԸ-Ի ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ Ա. ԲԱԼԴՐՅԱՆԻՆ

Սույնով ծանուցվում է, որ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/24» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնում կատարելու ընթացակարգով Դատական դեպարտամենտի կարիքների համար լազերային տպիչների, ձայնագրառման համակարգերի և սեղանի համակարգիչների ձեռքբերման նպատակով հայտարարված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2022թ. մայիսի 25-ի որոշմամբ 3-րդ չափաբաժնի մասով ՅՈՒՆԻՔՈՄՓ ՓԲԸ-ն հայտարարվել է ընթացակարգի ընտրված մասնակից:

Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, eauction.armeps.am համակարգի (այսուհետ՝ Համակարգ) կողմից սահմանվել է անգործության ժամկետ՝ մինչև 2022թ. հունիսի 11-ը ներառյալ: Հիշյալ անգործության ժամկետում որևէ մասնակից չի բողոքարկել պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Գնման ընթացակարգը կազմակերպված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման պահին կնքվելիք պայմանագրով նախատեսված թվով 550 հատ սեղանի համակարգիչներից թվով 280 հատի մատակարարման համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

Տեղեկացվում է, որ կնքվելիք պայմանագրի նախագիծը ներկայացվում է Ձեր էլեկտրոնային փոստի հասցեին և առաջարկվում՝ սույն ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված պայմանագիրը (պայմանագրի՝ Ձեր էլեկտրոնային փոստի հասցեին ներկայացված տարբերակը) ուղարկել «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/24» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ ddgnumner@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին, իսկ որակավորման և պայմանագրի ապահովումների բնօրինակները պատվիրատուին ուղղված ուղեկցող գրությամբ ներկայացնել Դատական դեպարտամենտ (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):

Քանի որ նախատեսված ֆինանսական միջոցները գերազանցում են գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ինչպես նաև պայմանագրի ամբողջական կատարման համար հետագայում ևս պահանջվում են ֆինանսական միջոցներ, ապա

- որակավորման ապահովումը, հատկացված ֆինանսական միջոցների մասով, ներկայացվում է կանխիկ փողի, կամ բանկերի կամ ապահովագրական կազմակերպությունների կողմից տրամադրված երաշխիքների ձևով: Երաշխիքի ձևով որակավորման ապահովումը ներկայացվում է «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/24» ծածկագրով ընթացակարգի հրավերով ներկայացված օրինակելի ձևի՝ Հավելված 3-ի, համաձայն, իսկ կանխիկ փողի ձևով ներկայացվող որակավորման ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000698» գանձապետական հաշվին,

- որակավորման ապահովումը, հետագայում պահանջվող ֆինանսական միջոցների մասով, ներկայացվում է Ձեր կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի («ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/24» ծածկագրով ընթացակարգի հրավերով ներկայացված օրինակելի ձևին /Հավելված 3.2, որում «Շահառուի հաշվի համարը» լրացվում է՝ 900008000664/ համապատասխան) կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացվող որակավորման ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000698» գանձապետական հաշվին:

- պայմանագրի ապահովումը, հատկացված ֆինանսական միջոցների մասով, ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Բանկային երաշխիքի ձևով պայմանագրի ապահովումը ներկայացվում է «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/24» ծածկագրով ընթացակարգի հրավերով ներկայացված օրինակելի ձևի՝ Հավելված 4-ի, համաձայն, իսկ կանխիկ փողի ձևով ներկայացվող պայմանագրի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000664» գանձապետական հաշվին:

- պայմանագրի ապահովումը, հետագայում պահանջվող ֆինանսական միջոցների մասով, ներկայացվում է Ձեր կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի («ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/24» ծածկագրով ընթացակարգի հրավերով ներկայացված օրինակելի ձևին /Հավելված 4.1, որում «Շահառուի հաշվի համարը» լրացվում է՝ 900005000758/ համապատասխան) կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացվող պայմանագրի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000664» գանձապետական հաշվին:

Որակավորման ապահովման չափը հավասար է ընտրված մասնակցի գնային առաջարկի 30 տոկոսին, իսկ պայմանագրի ապահովման չափը կազմում է կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսը:

Վերոնշյալ ժամկետում անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելու դեպքում մասնակիցը զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ

ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կատ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/24» ծածկագրով
գնման ընթացակարգի համակարգող՝ Ա. Խաչատրյան
Հեռ.՝ /+37410/ 511-787, 511-788